

Գայանե Խ. Չորանյան

ԻՍԼԱՄԱԿԱՆ ՎԱՐՁԿԱՆՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ*

Մուտք

Լեռնային Ղարաբաղի շուրջ հատունացող ռազմական ընդհարման հեռանկարը, իշխանության համար ծավալվող ներքին պայքարը և մի շարք այլ խորքային խնդիրներ պատճառ դարձան 1980-ականների վերջերին Ադրբեջանում իսլամական գործնի քաղաքականացման և վերափոխա-տավորման համար:

Ղարաբաղյան հիմնախնդրի ուժային լուծման ձգտումները դարձան Ադրբեջանի քաղաքական հայեցակարգի անկյունաքարը և մեծապես խթանեցին **քաղաքական իսլամի** մուտքը Ադրբեջան: Այդ երկրի քաղաքական գործիչները սկսեցին կրոնն օգտագործել որպես կապող օղակ՝ իսլամական աշխարհի հետ ավելի սերտ հարաբերություններ կառուցելու և նրա աջակցությամբ Ղարաբաղյան հակամարտությանը ադրբեջանաձևապես լուծում տալու համար:

Անկախության առաջին տարիներից սկսած Ադրբեջանը դիվանագիտական հարաբերություններ հաստատեց սկզբում Թուրքիայի ու Իրանի, այնուհետև Մաուդյան Արաբիայի, Քուվեյթի, ԱՄԷ-ի, Եգիպտոսի, Իրաքի, Սիրիայի, Պակիստանի հետ: 1991 թ. դեկտեմբերի 8-ին Ադրբեջանը դարձավ առաջին հետխորհրդային իսլամական հանրապետությունը, որն ընտրվեց «Իսլամական կոնֆերանս» կազմակերպության (ԻԿԿ)¹ լիիրավ անդամ, իսկ 1992 թ. անդամակցեց «Տնտեսական համագործակցության կազմակերպու-թյանը»², որոնց ամբիոններն օգտագործվում էին Հայաստանի «զավթո-ղական քաղաքականությունը» դատապարտող տարբեր ձևաչափի փաստաթղթերի ընդունման համար:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 12.06.2013:

1 «Իսլամական կոնֆերանս» կազմակերպությունը, որը 2011 թ. վերանվանվեց «Իսլամական համագործակցության կազմակերպության», ստեղծվել է 1969 թ., հանդիսանում է ամենամեծ ու ամենաազդեցիկ մուսուլմանական միջազգային կազմակերպությունը և միավորում է 57 երկիր: Մանրամասն տե՛ս http://www.oic-oci.org/page_detail.asp?p_id=52, <http://ipripak.org/factfiles/ff46.shtml>

2 «Տնտեսական համագործակցության կազմակերպությունը» տարածաշրջանային միջպետական տնտեսական կազմակերպություն է, որը ձևավորվել է 1985 թ.: Անդամ երկրներն են Իրանը, Թուրքիան, Պակիստանը, Ղազախստանը, Ադրբեջանը, Դրոզգոստանը, Աֆղանստանը, Տաջիկստանը, Թուրքմենստանը, Ուզբեկստանը: Մանրամասն տե՛ս <http://www.ecosecretariat.org/>

Ե (ՃԵ) քարի, թիվ 3 (43) հայիս-մեպրեթեր, 2013
ՎԻՄ համահայկական հանդես

Այն պայմաններում, երբ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը խարսխված էր ոչ թե կրոնական, այլ ազգային-քաղաքական խնդիրների վրա, Ադրբեջանի իշխանությունները փորձում էին նրան հաղորդել կրոնական ուղղվածություն: Դրանով նպատակ ունեին Ղարաբաղյան պատերազմի մեջ ներգրավել ողջ իսլամական աշխարհի «ջիհադի մարտիկներին»: Արդյունքում օտարերկրյա կրոնական կազմակերպությունները, բարեգործական միությունները, իսլամական ծայրահեղական կառույցները կարողացան հեշտությամբ ներթափանցել Ադրբեջան և ամրապնդվել այնտեղ՝ այդ երկիրը դարձնելով ահաբեկչության «որջ»:

Այս գործընթացին նպաստեց նաև այն իրողությունը, որ Ղարաբաղյան պատերազմի տարիներին սկսվեց Աֆղանստանից, Պակիստանից, Թուրքիայից, Չեչնիայից վարձկան մոջահեդների³ մեծ հոսք դեպի Ադրբեջան՝ հայերի դեմ պայքարի կարգախոսով:

1.2.Չեչեն վարձկանները Ղարաբաղում

Երբ 1992 թ. Աբուլֆազ Էլչիբեյի գլխավորած Ադրբեջանի Ժողովրդական ճակատը եկավ իշխանության, ինքնահռչակված Իչկերիայի և Ադրբեջանի միջև ձևավորվեցին բարիդրացիական հարաբերություններ: 1992 թ. գարնանը Ադրբեջանի իսլամական առաջնորդները և այդ երկրի պաշտպանության նախարարության պատվիրակությունը հանդիպում ունեցան Չեչնիայի նախագահ Զոհար Դուդաևի հետ: Երկկողմ հանդիպումների ժամանակ, բացի երկու երկրների դիվանագիտական, տնտեսական և մշակութային համագործակցության խնդիրներից, քննարկվեցին նաև ռազմական փոխօգնության հեռանկարները, մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղում ընթացող ռազմական գործողություններին Չեչնայի զինված ուժերի մասնակցության հարցը, որոնց ռազմամթերքի և սպառազինության մատակարարումը ադրբեջանական կողմը վերցրել էր իր վրա⁴: 1992 թ. չեչեն գրոհայինների խումբը՝ հրամանատար Շամիլ Բասաևի գլխավորությամբ, ժամանեց Ադրբեջան և մայիսին մասնակցեց Շուշիի, իսկ 1993 թ. ամռանը՝ Ադղամի ռազմական գործողություններին: Բասաևի խմբավորումը վերջիններից էր, ով կրելով ծանր պարտություններ՝ հայերի ճնշմամբ լքեց ռազմական դիրքերը⁵:

Հետագայում իր հարցազրույցներում Բասաևը նշել է, որ իր կարիերայի ընթացքում նա և իր գումարտակը միայն մեկ անգամ են պարտություն կրել՝ Ղարաբաղում: Չեչենական գումարտակը կարևոր դեր է խաղացել նաև 1993 թ. Հորադիզ քաղաքի վերագրավման գործողության մեջ՝ հայերի վրա հարձակվելով Իրանի սահմանի երկայնքով: Չնայած ադրբեջանական կողմի հերքումներին, որոշ աղբյուրներ հավաստում են, որ 1992-1993 թթ. Բասաևի հետ միասին ղարաբաղյան մարտերին մասնակցել է նաև

3 «Մոջահեդ» բառը, որը ծագում է արաբական «ջահադա» արմատից, նշանակում է հանուն Աստծո և հավատի կովող մարտիկ (ջիհադի մարտիկ):

4 Sfé «Экспресс-хроника», N 28. 1992. Մեջբերումն ըստ՝ Գ. Демоян, Турция и Карабахский конфликт: в конце XX- начала XXI веков, Историко-сравнительный анализ, Ереван, 2006, с. 182.

5 Sfé **Thomas de Waal**, Black Garden: Armenia nad Azerbaijan through Peace and War, New York and London, 2003, p. 179.

հայտնի մոջահեդ Ալ-Խաթաբը⁶:

Ղարաբաղի և Աֆղանստանի մարտերի վետերան, ադրբեջանցի գնդապետ Ազեր Ռուստամովի պատմածներից պարզ է դառնում, որ չեչեն հայտնի ահաբեկիչ Սալման Ռադունը, ով 1992 թ. հիմնեց և գլխավորեց Իչկերիայի նախագահի «նախագահական բերետներ» զինված խմբավորումը, իսկ հետագայում դարձավ «գեներալ Դուդանի բանակի» հրամանատարը, նույնպես մասնակցել է Ղարաբաղում ծավալված կռիվներին: Մասնավորապես՝ խոսելով 1992 թ. ամռան մարտերի մասին՝ Ռուստամովը նշել է. «Այս կռիվներում անգնահատելի օգնություն են մեզ ցուցաբերել մոտ հարյուր չեչեն կամավորներ՝ Շամիլ Բասանի և Սալման Ռադունի գլխավորությամբ: Մեծ կորուստների պատճառով նրանք ստիպված էին թողնել մարտի դաշտը և հեռանալ»⁷:

Հայ կամավորականների «Երկրապահ» միության շտաբի նախկին ղեկավար, գեներալ-մայոր Աստվածատուր Պետրոսյանի հայտնած տեղեկատվության համաձայն՝ 1992 թ. ամռանը ադրբեջանցիների կողմից կռվել են մոտ չորս հարյուր չեչեն գրոհայիններ՝ Բասանի գլխավորությամբ: 1992 թ. հուլիսի 3-ին՝ Կարմիրավան գյուղի ազատագրման գործողության ժամանակ, նրանցից շատերը սպանվեցին, իսկ 120-ը գերի ընկան, ինչից հետո Բասանը այլևս չվերադարձավ Ղարաբաղ⁸:

Մերձավոր Արևելքի և ահաբեկչության գծով մասնագիտացած ամերիկացի լրագրող Ջոն Կուլին (John Kent Cooley) նշում է, որ մինչև 1994 թ. ամառը չեչեն մոջահեդների թիվը Ղարաբաղյան ռազմաձևակառույցում հասել է 2500-ի, որոնց մեծ մասը տեղակայված էր սահմանին կից՝ հարավային ճակատում⁹: Չեչենական ստորաբաժանումները Ղարաբաղյան փորձը և ձեռք բերված զինամթերքը հետագայում օգտագործեցին չեչենական պատերազմների ժամանակ:

2. Աֆղան մոջահեդների դերակատարությունը

Աֆղանական մոջահեդների անմիջական ներկայությունը զգացվեց ինչպես Տաջիկստանում, այնպես էլ Լեռնայի Ղարաբաղում և Չեչնիայում ծավալված ռազմական գործողությունների ժամանակ: Ինչպես նշում է միջազգային ահաբեկչության գծով փորձագետ Ռոհան Գունարատնան (Rohan Gunaratna), Խորհրդային Միության փլուզումից հետո «Ալ-Բաիդա» կազմակերպությունը առաջինը Բաքվում հիմնեց իր մասնաճյուղը, որն աջակցում էր ադրբեջանցի մոջահեդներին Լեռնային Ղարաբաղի վիճելի անկլավի համար քրիստոնյա հայերի դեմ 1988-1994 թթ. վարած պատերազմում¹⁰: Պակիստանի, Իրանի, Մաուդյան Արաբիայի, Սուդանի, Թուրքիայի ազգային անվտանգության ծառայությունների հովանավորությամբ

6 Shtu EurasiaNet, Chechen fighter's death reveals conflicted feelings in Azerbaijan. May 14, 2002.

7 Азербайджанский ветеран карабахской войны: Басаев и Радуев оказали нам неоценимую помощь: Нагорный Карабах за неделю, <http://www.regnum.ru/news/393591.html>

8 Shtu **Аствацатур Петросян**: Шуши был освобожден благодаря грамотной самообороне, <http://www.panarmenian.net/rus/politics/news/48361/>

9 Shtu **J. K. Cooley**, Unholy Wars: Afghanistan, America and International Terrorism, London (New edition), 2000, p. 180.

10 Shtu **R. Gunaratna**, Inside Al Qaeda: Global Network of Terror, New York, 2002, p. 134.

մոջահեդների ջոկատները կրթություն էին ստանում Պակիստանում և Աֆղանստանում տեղակայված «Ալ-Քաիդայի» հատուկ ճամբարներում՝ ողջ աշխարհով մեկ սրբազան պատերազմի տարածման համար:

1993 թ. հուլիսին Ադրբեջանի ներքին գործերի փոխնախարար Ռովշան Զավադովի Քարուլ այցելությունից հետո¹¹ Աֆղանստանի վարչապետ, «Իսլամական կուսակցության» («Հիզբ-ի-Իսլամի») հիմնադիր Գուլբուդդին Հեքմաթյարը համաձայնեց տրամադրել աֆղան և արաբ մոջահեդներ՝ Լեռնային Ղարաբաղի դեմ պատերազմին մասնակցելու նպատակով: Հեքմաթյարին, ով աֆղանական պատերազմից հետո կորցրել էր Սաուդյան Արաբիայի ֆինանսական աջակցությունը, Ղարաբաղյան պատերազմին մասնակցությունը հնարավորություն կտար ոչ միայն շարունակել իսլամական հեղափոխության «արտահանումը», այլև վերականգնել ֆինանսական ռեսուրսները: Մակայն հայկական առաջին հետախուզադիվերսիոն ջոկատի հիմնադիր-հրամանատար Վլադիմիր Վարդանովի համոզմամբ, իրականում Հեքմաթյարը իր բարձրակարգ «Մև արագիլներ» դիվերսիոն-կործանիչ ջոկատից բավականին քիչ մարդ է ուղարկել Ղարաբաղյան ռազմաձևակառ: Ուղղակի նա դեմ էր թալիբան շարժմանը և «թալիբների շրջանում որոշակի քարոզ էր տանում և հնարավորինս շատ մարդ վաճառելով այդ ժամանակվա «Բաքվի խաներին»՝ փորձեց թուլացնել թալիբների ճնշումը Քարուլի վրա: Դրանով Հեքմաթյարը լուծում էր նաև ներքին հարց»¹²:

Ռուսաստանի արտաքին հետախուզական ծառայության տեղեկությունների համաձայն՝ 1993 թ. սեպտեմբերին 1500 աֆղան մարտիկներ են մուտք գործել Ադրբեջան¹³: Իրանից Ադրբեջան եկած աֆղան մոջահեդներից Բախտիար Վերբալլահ Վաբերգաիդի հաղորդած տեղեկությունների համաձայն, ով 1994թ. ապրիլի 22-ին հայկական ուժերի կողմից գերի էր վերցվել, վարձկանները օրական վճարվում էին 1000 մանաթ, սակայն Ադրբեջանի զինվորական շտաբը խոստացել էր պայմանագրի ավարտից հետո յուրաքանչյուրին հատկացնել 5000 դոլար հավելավճար: Աֆղանների կենսապայմաններն ավելի բարեկարգ էին, քան ադրբեջանցի զինվորներինը, և նրանք իրենց արձակուրդը Բաքվում կամ Աֆղանստանում էին անցկացնում: Մոջահեդները ապրում էին առանձին, քանի որ ադրբեջանցիները չէին հետևում շարիաթի օրենքներին, չէին աղոթում, սակայն ադրբեջանական զինվորները պահպանում էին շփումը վարձկանների հետ՝ Աֆղանստանից բերված թմրանյութի պատճառով: Ադրբեջանի զինվորական շտաբի և մոջահեդների կապող օղակը աֆղան Վայդալլահն էր, ով Բաքվում կազմակերպում և համակարգում էր մոջահեդների հետ կապված աշխատանքները¹⁴: Ադրբեջանցի զինվորների և մոջահեդների միջև հաճախ էին տեղի ունենում դաժան ընդհարումներ, ներառ-

11 Տե՛ս Islamic Mercenaries in Nagorno Karabakh War Afghan Fighters Aiding Azerbaijan in the War against NKR, The Washington post, August 11, 1993, http://www.nkrusa.org/nk_conflict/islamic_mercenaries.shtml

12 Գայանե Չոբանյանի հարցազրույցը Վ. Վարդանովի հետ, Եր., մարտի 19, 2013թ., Գայանե Չոբանյանի անձնական արխիվ:

13 Տե՛ս J. K. Cooley, նշվ. աշխ., էջ 180:

14 Տե՛ս «Moscow News», N 23, June 5-12, 1994.

յալ քաղաքացիների գլխատումն ու ծիսական անդամահատումը¹⁵: Այս անհանդուրժողականությունը պայմանավորված էր ինչպես կրոնական, այնպես էլ հոգեբանական գործոնով. ադրբեջանցի զինվորների մի մասը Աֆղանստանի պատերազմի ժամանակ խորհրդային բանակի կազմում կռվել էր մոջահեդների դեմ, ուստի նրանց համար դժվար էր մեկը մյուսին ընկալել որպես դաշնակիցներ: Ադրբեջանի իշխանությունները մինչ օրս հերքում են ռազմական գործողություններին մոջահեդների մասնակցությունը, և խնդրին հնչեղություն չտալու համար ոչ բոլոր մահացածների անուններն են Աֆղանստան ուղարկվել՝ թաքցնելով զոհերի իրական թիվը¹⁶:

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ

3. Իսլամական այլ ուժերի աջակցությունն Ադրբեջանին

Հայկական առաջին հետախուզադիվերսիոն ջոկատի հիմնադիր-հրամանատար Վլադիմիր Վարդանովը փաստում է, որ բացի չեչենական ստորաբաժանումներից, Արցախյան պատերազմին մասնակցել են Ուզբեկստանի, Տաջիկստանի իսլամական կազմակերպությունների, ինչպես նաև «Կովկասի ժողովուրդների համադաշնություն» կազմակերպության ռազմական խմբավորումները, որոնք ավելի շուտ գալիս էին ոչ թե հայերի դեմ կռվելու, այլ գործնական վարժանքների՝ ապագայում «Կովկասի Էմիրաթ» ստեղծելու նպատակով: Ղարաբաղյան պատերազմի ընթացքում Արխազիա ուղարկված սույն ստորաբաժանումը հայերի հետ նույն զորքի կազմում կռվել է Վրաստանի դեմ¹⁷: Մա ապացուցում է, որ քրիստոնյա աշխարհի դեմ ընդհանուր իսլամական դրոշի տակ համախմբվելու կրոնական քարոզները ունեին մանիպուլյատիվ քաղաքական նպատակներ: Վլադիմիր Վարդանովի վկայությամբ՝ «Այս ամենը ուներ ընդգծված հակառուսական ուղղվածության դիմագիծ՝ ԱՄՆ հովանու ներքո: 1992 թ. տեղեկատվություն ստացանք, որ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը ապահովել է Իրանի տարածքով մոջահեդների փոխադրումը Ադրբեջան, ինչպես նաև ԱՄՆ հրահանգիչներին զուգահեռ՝ ռազմական պատրաստականության կուրսեր էին անցկացնում Ադրբեջանում»¹⁸: Վերոնշյալ տեղեկատվությունը հետագայում հաստատվել է 2011 թ. մայիսի 9-ին Արդեբիլում Իրանի հոգևոր առաջնորդ այաթոլլահ Ալի Համենեինի ներկայացուցիչ, իմամ-ջումա այաթոլլահ Մեիդ Հասան Ամելիի հայտարարությամբ: Նա նշել է, որ Ղարաբաղյան պատերազմի ժամանակ Իրանը Ադրբեջանին մատակարարել է զենք և զինամթերք, ինչպես նաև ցուցաբերել է կազմակերպչական օգնություն, այդ թվում՝ աֆղանցի մոջահեդների տեղափոխումը ռազմաձևակատ: Շուշիի մարտերի ժամանակ Ռահիմ Ղազիևի (1992-1993 թթ. Ադրբեջանի պաշտպանության նախարար) և Ռովշան Զավադովի (1992-1994 թթ. Ադրբեջանի ոստիկանության հա-

Ե (ԺԵ) քառի, թիվ 3 (43) հոսիս-մեպրեմեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

15 Stå M. **Taaraby**, The Mujahedin in Nagorno-Karabakh: A Case Study in the Evolution in Global Jihad, http://www.realinstitutoelcano.org/wps/portal/rielcano_eng/Content?WCM_GLOBAL_CONTEXT=/elcano/elcano_in/zonas_in/international+terrorism/dt20-2008

16 Stå H. **Demoyan**, Karabakh Drama. Hidden Acts, Yerevan, 2003, pp. 91-92.

17 Stå Գայանե Չոբանյանի հարցազրույցը Վ. Վարդանովի հետ, Եր., մարտի 19, 2013թ., նույն տեղում:

18 Նույն տեղում:

տուկ նշանակության ջոկատի հրամանատար) խնդրանքով ստեղծվել էր ընդհանուր ադրբեջանա-իրանական պաշտպանական շտաբ, որի շրջանականերում Թավրիզի և Արդեբիլի գեներալները օգնում էին Ադրբեջանին¹⁹:

2013 թ. ապրիլին նման հայտարարություն է արել նաև Ղարաբաղյան պատերազմի ժամանակ Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի սախկին հրամանատար Մոհսեն Ռեզային, ով անձամբ է հրամայել իր գործին ռազմական օգնություն ցուցաբերել Ադրբեջանի Հանրապետության բանակին²⁰: Սակայն ռազմական և հումանիտար օգնություն ցուցաբերելով՝ Իրանը սուկ կրոնական ակտիվ քարոզչություն էր ծավալում՝ Ադրբեջանի ներսում իր ազդեցությունը տարածելու և երկրի քաղաքական գործընթացներին ներազդելու լծակներ ստեղծելու նպատակով: Մինչդեռ, Ղարաբաղյան հակամարտության սկզբնական շրջանից սկսած՝ Ադրբեջանին բազմակողմանի ռազմական, քաղաքական, դիվանագիտական, տնտեսական օգնություն տրամադրած հիմնական երկիրը եղել է Թուրքիայի Հանրապետությունը²¹:

4. Ղարաբաղյան ճակատում իսլամական վարձկանների առկայությունը փաստող տվյալներ

Թեև ո՛չ մուսուլմանական երկրները, ո՛չ էլ իսլամական ծայրահեղական խմբավորումները պաշտոնապես չեն արձանագրել Ղարաբաղյան պատերազմին իրենց մասնակցության փաստը, սակայն կան բավական թվով ապացույցներ, որոնք հիմնված են մարտերի ժամանակ սպանված մոջահեդների դիակների առկայության, նրանց մոտ հայտնաբերված տեղեկատվության, նաև պատերազմական գործողություններին ականատես օտարերկրյա լրագրողների և բարձրաստիճան պաշտոնյաների հրապարակած տեղեկությունների վրա:

1993 թ. գարնան-աշնան ամիսներին Լեռնային Ղարաբաղի հարավարևմտյան հատվածում Հորադիզի և Զանգեղանի ուղղություններով ծավալված մարտերի ընթացքում հայկական կողմի ձեռքն են ընկել Աֆղանստանում տպագրված գրականություն, տետրեր, քարտեզներ, գծագրեր, պակիստանյան և աֆղանական հասցեներով անձնական նամակներ, Բաքվում արված աֆղանցի գրոհայինների լուսանկարներ: Փաստաթղթերը կազմված էին դարի և փուշոս լեզուներով, իսկ դրանցից որոշներն էլ տպագրված էին Աֆղանստանի իսլամական գիտական միության բլանկների վրա²²:

19 Տե՛ս «Иран снабжал оружием Азербайджан и доставлял в Карабах бойцов из Афганистана», <http://www.xn--cladwdmv.xn--plai/news/polit/1402476.html>

20 Տե՛ս Iran aided Rep of Azerbaijan militarily against Armenia, says former Revolutionary Guards commander, <http://en.irangreenvoice.com/article/2013/mar/04/3946>

21 Մույն հոդվածում որևէ անդրադարձ չի կատարվում Ղարաբաղյան հակամարտության ընթացքում Թուրքիայի կողմից Ադրբեջանին տրամադրված օգնությանը, քանզի այն խարսխված էր ոչ թե իսլամական համերաշխության, այլ էթնիկ հիմքի վրա:

22 Որոշ լուսանկարների և փաստաթղթերի պատճենները կարող եք տեսնել **И. Харалампидис**, Спонсорированные на убийство наемники и террористические сети в Азербайджане, Москва, 2013, с. 9-13.

1994 թ. Աֆղանստանի նախագահ Բուրհանուդդին Ռաբբանին Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին ուղարկած պաշտոնական նամակում նշում էր, որ Աֆղանստանի կառավարությունը հավանություն չի տալիս Աֆղանստանի քաղաքացիների անընդունելի և աննախադեպ մասնակցությանը Լեռնային Ղարաբաղի ռազմական գործողություններին և մտահոգություն էր հայտնում, որ որոշ արկածախնդիր խմբեր, հետապնդելով անձնական ֆինանսական շահեր, նպաստում են Հայաստանի և Ադրբեջանի հարաբերությունների վատթարացմանը՝ միևնույն ժամանակ վտանգի տակ դնելով Աֆղանստանի սոցիալ-քաղաքական կայունությունը²³:

«Աֆղանստանի կանանց հեղափոխական միությունը» իր 1994 թ. մայիսի 23-ի զեկույցում նշում էր, որ «Հեզբ-ի Իսլամին» ակտիվացրել է Ադրբեջանի համար մոջահեդների հավաքագրումը և միայն վերջին հոսքով Բաքու է ուղարկել մոտ 500 աֆղանցի²⁴: Ուշագրավ էր նաև 1999 թ. մարտի 17-ին Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատում գրաֆ Շեննոնի ելույթը, որտեղ նշվում էր թուրք սպաների կողմից ղեկավարվող Ադրբեջանի բանակի կազմում մոջահեդների առկայության փաստը, որոնք ամսական 500 դոլարով կռվում էին Ադրբեջանի կողմից²⁵: Ադրբեջանական բանակում վարձկանների առկայության փաստը հետագայում հաստատել է նաև իրավապաշտպան Լեյլա Յունուսովան, ով 1992-1993 թթ. Ադրբեջանի պաշտպանության նախարարության տեղեկատվական-վերլուծական կենտրոնի ղեկավարն էր: Ադրբեջանական «Ջերկալո» թերթում տպագրված իր հոդվածում նա նշել է, որ Ադրբեջանի կողմից կռվում էին մոտավորապես 2500 վարձկաններ Աֆղանստանից²⁶:

1994 թ. դեկտեմբերի 21-ին Հայաստանի արտգործնախարարությունը նամակ է ուղարկել «ՄԱԿ-ի Վարձկանների գծով մարդու իրավունքների հանձնաժողով»-ի հատուկ զեկուցողին, որում արտահայտել է Հայաստանի իշխանությունների դժգոհությունը Լեռնային Ղարաբաղի պատերազմում Ադրբեջանի կողմից տարբեր երկրների վարձկանների ներգրավվածության կապակցությամբ²⁷: Նամակում մանրամասն տեղեկություններ էին պարունակվում հիմնականում Աֆղանստանից, Թուրքիայից, Իրանից, Ռուսաստանից, Ուկրաինայից Ադրբեջանի կողմից կռված վարձկանների վերաբերյալ: Վարձկանները ամսական ստանում էին 700-1000 դոլար, իսկ օդաչուներն ամեն հաջող գործողության համար՝ 5000 դոլար վարձավճար: Նրանք ծառայում էին 860-րդ և 723-րդ մոտոհրաձգային բրիգադներում, օդային, ցամաքային, հրետանային ուժերում և անվտանգության ծառայությունում: Նամակում նշվում էր, որ Լեռնային Ղարաբաղում պատերազմի մեջ ներգրավված աֆղան մոջահեդների թիվը հասնում էր 3000-ի, որոնք

23 Shtu Afghan «Wild Goose» in Karabakh Cage, Moscow News, N 23, June 5-12, 1994.

24 Shtu «Women's Revolutionary Organization of Afganistan», «Hekmatyar sending troops to Azerbaijan», <http://www.rawa.org/reports3.html#Hek> (մտքերված է **И. Харалампидис**, Спонсированные на убийство наемники и террористические сети в Азербайджане, Москва, 2013, с. 8.)

25 Shtu http://www.publications.parliament.uk/pa/ld199899/ldhansrd/vo990317/text/90317-08.htm#90317-08_head0

26 Shtu **Лейла Юнус**, Будущее за профессиональной Армией, «Зеркало», 10 август, 2002, <http://miacum.am/forum/politics/military/1445>

27 <http://www.un.org/documents/ga/docs/50/plenary/a50-390add1.htm>

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ

Ե (ԺԵ) ԳՐԱԻԻ, ԹԻՎ 3 (43) ԽԱՅԻՍ-ՄԵԿՐԵՄԵՐ, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

կատարում էին նաև «հատուկ առաջադրանքներ»։ ադրբեջանցի դասալիքների դեմ իրականացնում էին պատժիչ և վերահսկիչ գործողություններ։ Այս գործիքները կազմավորել էին առանձին ճամբարներ, որոնք տեղակայված էին Դուլիբուրուն (Ժդանովի շրջան), Սեյֆուլի (Շամխորի շրջան) և Ալի-Բայրամլի (Եվլախի շրջան) գյուղերում։ Բաքվի կենտրոնում «Ապշերոն» հյուրանոցում, ստեղծված էր գրասենյակ, որը հավաքագրում էր վարձկաններին և նրանց տեղավորում մինչև համապատասխան գորամասեր ուղարկելը²⁸։

5. Ղարաբաղյան պատերազմում իսլամական ահաբեկիչների մասնակցության հետևանքները

Չեչեն, աֆղան և արաբ մոջահեդներին հայերի դեմ պատերազմի մեջ ներգրավելը ժամանակի ընթացքում Ադրբեջանի կառավարության համար մեծ խնդիր դարձավ։ Ռազմաճակատում պարտություններ կրելով՝ մոջահեդների խմբավորումները 1994 թ. գորացրվեցին և տեղափոխվեցին տարածաշրջանային հակամարտությունների այլ կիզակետեր, իսկ նրանց որոշ մասն էլ մնալով Ադրբեջանում՝ նպաստեց թմրանյութերի մաքսանենգությանն ու ծայրահեղական գաղափարների տարածմանը՝ երկիրը դարձնելով միջազգային ահաբեկչական կառույցների հենարան։ Արդեն 1993 թ. Ադրբեջանում գործում էին «Ալ-Քաիդա» («Հիմք»), «Ալ-Ջիհադ» («Սրբազան պատերազմ»), «Ջամաա ալ-իսլամիա» («Իսլամական ահաբեկչություն») և այլ արմատական կրոնաքաղաքական կազմակերպություններ։ Հեյդար Ալիևը սերտ կապեր էր հաստատել այս ահաբեկչական խմբավորումների հետ և Ադրբեջանում անվտանգ ապաստարան տրամադրելու պայմանով նրանցից աջակցություն էր ստանում հայերի դեմ պայքարում²⁹։

Միայն այն բանից հետո, երբ ամերիկյան հատուկ ծառայությունները Քենիայի և Տանզանիայի ԱՄՆ դեսպանատների 1998 թ. օգոստոսի 7-ի պայթեցման գործի հետաքննության արդյունքում պարզեցին, որ Ուսամա բեն Լադենը իր ահաբեկչական գործողությունները կարգավորել է «Ալ-Քաիդայի» ադրբեջանական մասնաձյուղից³⁰, Ադրբեջանի իշխանությունները ստիպված էին լուրջ քայլեր ձեռնարկել երկրում արմատավորված ծայրահեղական կառույցների անդամներին ձերբակալելու ուղղությամբ։

Ադրբեջանում ակտիվ գործունեություն էր ծավալում նաև «Ջեյշուլլահ» («Ալլահի բանակ») ահաբեկչական կազմակերպությունը, որի հիմնադիր Մուրարիզ Ալիևը սերտ կապեր ուներ չեչեն գրոհայիններ Իբն Խաթթաբի և Շամիլ Բասսևի հետ։ Այս կազմակերպությունը «Ալ-Քաիդա» և «Ֆեղաի իսլամ» կազմակերպությունների հետ համատեղ իրականացրել է նաև մի շարք ահաբեկչական գործողություններ, որոնց նպատակն էր Ադրբեջանը

28 ՀՀ ԱԱԾ հասարակության և մամուլի հետ կապերի ծառայություն, մոջահեդների և չեչենների հատուկ գործիքներ պահած Ադրբեջանն ինքն է զստանցում «հակաահաբեկչության» մասին, «Ազգ» օրաթերթ, Եր., N 203, 07-11-2001:

29 Տե՛ս Y. Bodansky, The new Azerbaijan Hub: How Islamist operations are targeting Russia, Armenia and Nagorno-Karabakh, «Strategic Policy», 10/99.

30 Մանրամասն տե՛ս Н. Алиев, Терактом против пасольства США в Кении руководили из Баку, «Эхо», 18 августа 2001, Н. Алиев, Нити сходятся в Баку?, «Эхо», 29 августа, 2001, Б. Бродский, Почему в Баку звонил король терроризма?, «Ежедневные новости», 14 сентября, 2001.

«մաքրել» օտարերկրյա ազդեցությունից, շեղել աշխարհիկ զարգացման ուղուց և երկիրը վերադարձնել դեպի «մաքուր իսլամ»³¹:

Ակներև է, որ Աֆղանստանի, Ղարաբաղի, Չեչնիայի, Բոսնիայի հակամարտությունները և Տաջիկստանի ու Ուզբեկստանի քաղաքացիական պատերազմները փոխկապակցված էին միմյանց հետ, քանի որ ԱՄՆ հովանավորությամբ նրանցում մասնակցում էին մոջահեդների միևնույն փորձված հրամանատարները: Ռուսաստանյան լրագրող Սանտրաբ Շերմատովան, ով բազմիցս գտնվել է հակամարտությունների գոտիներում, գրում է. «Չեչեն և աֆղան զինվորները շարունակել են կռվել Լեռնային Ղարաբաղում մինչև 1994 թ.: Ուշադրության է արժանի այն փաստը, որ Քաբուլ-Բաքու թռիչքը տանում էր աֆղան զինվորներին, միևնույն ժամանակ վերադարձի ճանապարհին չեչեններին հասցնում էր Քունդուզ և Թալոբան քաղաքներում գտնվող վերապատրաստման ճամբարները, որտեղ նաև հաստատվել էին տաջիկ ընդդիմադիրները»³²:

Ղարաբաղյան պատերազմը զինադադարի փուլ թևակոխելուց հետո Ադրբեյջանը դարձավ տարանցիկ ճանապարհ Չեչնիայի պատերազմին աջակցություն ցուցաբերող երկրների ու կազմակերպությունների համար: Արդյունքում ահաբեկչական ցանցի հանգույցներից մեկը վերածվելուց բացի, երկրում տարածվեցին վահաբական գաղափարները՝ ժամանակի ընթացքում դառնալով ընդդիմադիր քաղաքական ուժերին համախմբող քողածածկույթ: 1990-ականների սկզբին Թուրքիա, Հյուսիսային Կիպրոսի չճանաչված թուրքական հանրապետություն և մի շարք Մերձավոր արևելյան երկրներ կատարած իր այցերի ժամանակ Իչկերիայի նախագահ Ջոհար Դուդանին հաջողվեց համաձայնության գալ այդ երկրներից Չեչնիա զինամթերքի ներկրման հարցի շուրջ: Արդեն 1992 թ. սկզբից սկսվեց Ղարաբաղյան ռազմական գործողություններում օգտագործված ռազմամթերքի մեծաքանակ տեղափոխումը Չեչնիա: Հատկապես 1994 թվականին՝ չեչենական առաջին պատերազմի սկզբնական շրջանում, Ադրբեյջանում իրենց գործունեությունը ծավալեցին այնպիսի իսլամական կազմակերպություններ և բարեգործական ընկերություններ, ինչպիսիք են «Ջամիաթ ախյա աթ-թուրազ ալ-իսլամի» («Իսլամական ժառանգության վերածնման միություն»), «Ռաբիթա ալ-ալամ ալ-իսլամի» («Համաշխարհային իսլամական լիգա»), «Հեյաթ ալ-իդասա ալ իսլամիա ալ-ալամիա» («Իսլամական օգնության միջազգային կազմակերպությունը»), «Հեյաթ ալ-դաուս վա ալ-մուսասադա լի մուսլիմի ալ-Քաուքազ» («Կովկասի մուսուլմանների օգնության և աջակցության կազմակերպությունը»), և այլն³³: Այս կազմակերպությունները ռազմական, նյութական և հումանիտար օգնություն էին փոխանցում չեչեն վահաբականներին, ինչպես նաև չեչենական պատերազմներից հետո Ադրբեյջան ներթափանցած գաղթականներին, որոնց քանակը արդեն 1996 թ. հասնում էր 5 հազարի³⁴:

1994 թ. աշնանը չեչանական ազգային ավիաուղիների ինքնաթիռները

31 Տնս Следство по делу «Джейшупуллах» («Армия Аллаха») завершено, http://neweurasia.info/archive/2000/ka_press/08_28_caspian-28.html

32 S. **Shermatova**, «Khattab and Central Asia», Moscow News, 13 September, 2000.

33 Տնս А. **Юнусов**, Ислам в Азербайджане, Баку, 2004, с. 260.

34 Տնս А. **Юнусов**, Миграционные процессы в Азербайджане, Баку, 2009, с. 237.

իրականացնում էին Խարտում-Բաքու ուղղությամբ չվերթներ՝ չնչված բեռով: Իսկ Արևելյան Գերմանիայում Թուրքիայի կողմից գնված ռուսական արտադրության զենքերը Բիթլիս քաղաքի վրայով օդային ճանապարհով ուղարկվում էին Բաքվից ոչ հեռու գտնվող Ադրբեջանի ռազմական «Նաստանայա» օդանավակայան³⁵, այնտեղից էլ՝ Չեչնիա: 1994-1995 թթ. չեչենական ուժերի զինման և կամավորների տրամադրման գործում ակտիվ դեր խաղացին «Գորշ գայլեր» («Բոզ քուրթլար») թուրքական ազգայնական կազմակերպության ադրբեջանական թևը և նրա ղեկավար Իսքենդեր Համիդովը³⁶: «Ալ-Քաիդայի» հովանավորությամբ չեչեն գրոհայինների գլխավոր հրամանատար Խաթթաբի հիմնած մոջահեդների պատրաստման բազմաթիվ ռազմական կենտրոններում վերապատրաստություն էին անցնում նաև ադրբեջանցի վահաբականների ռազմական խմբավորումները: 1995 թ. սկզբին Չեչնիայի իսլամական հրամանատարները հայտարարեցին, որ «Ադրբեջանցիները և կովկասցի այլ կամավորներ լեռներում գտնվող վերապատրաստման ճամբարներում սպասում են իրենց հերթին հարձակում իրականացնելու ռուսական թշնամու և վրացական ռազմական ստորաբաժանումների վրա, եթե նրանք փորձեն միջամտել»³⁷:

Ադրբեջանի իշխանություններին այդ երկրի Ազգային անվտանգության նախարարության հայտնած տեղեկատվության համաձայն՝ այդ երկրի մոտավորապես 300 քաղաքացի ուսում է ստացել Հյուսիսային Կովկասի վահաբական կենտրոններում, իսկ չեչենական երկրորդ պատերազմի ընթացքում մահացել են 13 ադրբեջանցիներ, որոնք հաճախում էին Բաքվում վահաբականների կենտրոն համարվող «Աբու Բաքր» մզկիթ: 1999-2003 թթ. Ադրբեջանի իշխանությունները դատապարտել են ավելի քան 70 տեղացի վահաբականների՝ Չեչնիայում ռազմական գործողություններին մասնակցելու համար³⁸:

Ավելին՝ Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի արտաքին քաղաքականության հարցերով խորհրդական Վաֆա Գուլուզադեն հայտարարել է, որ «չեչենական և դաղստանյան պայքարը պետք է դիտարկել որպես ազգային-ազատագրական պայքար, այլ ոչ թե անհարելչություն, ինչպես փորձում են ներկայացնել ռուսական իշխանությունները»³⁹:

Հատկանշական է նաև այն փաստը, որ Միսկվայի չեչենական մաֆիայի պարագլուխ, առաջին չեչենական պատերազմի տարիներին Ջ. Դուդանի կողմից ներքին հետախուզական ծառայության ղեկավարի պաշտոնում նշանակված Խոժ-Ահմեդ Նուխաևի մշտական նստավայրը Բաքուն էր: Չեչեն գրոհայիններին օգնություն տրամադրելու համար նա արտերկրից իրականացնում էր դրամահավաք, իսկ ավարներով և լեզգիներով բնա-

35 Տե՛ս **В. Авьюцкий**, Северный Кавказ как «внутреннее зарубежье» России, «Центральная Азия и Кавказ», N 5 (23), 2002, с. 75.

36 Տե՛ս **Тодуа**, Азербайджанский пасьянс, Москва, 2001, с. 45, <http://fpmail.friends-partners.org/friends/news/omri/1995/06/9506081.html%28opt,graphics,unix,russian,kio8,new%29>, 3.

37 **Y. Bodansky**, Chechnya. The Mujahedin factor, http://www.freeman.org/m_online/bodansky/chechnya.htm

38 Տե՛ս **А. Юнусов**, Азербайджан в начале XXI века: Конфликты и потенциальные угрозы, Баку, 2007, с. 117.

39 **Y. Bodansky**, The new Azerbaijan Hub: How Islamist operations are targeting Russia, Armenia and Nagorno-Karabakh, «Strategic Policy», 10/99.

կեցված Զաքաթալա քաղաքը դարձրել էր անցակետ, որտեղից մոջահեդները կարող էին Դադստանով մտնել Չեչնիա⁴⁰:

Չեչենական առաջնորդները բազմիցս իրենց հավատարմությունն են հայտնել Ադրբեջանի կառավարությանը և հավաստիացրել են, որ «ներքին խնդիրները» լուծելուց հետո կտեղափոխվեն դարաբաղյան գոտի՝ Ադրբեջանի «օկուպացված տարածքները» ազատագրելու համար: Ինչպես նշել է չեչեն վահաբականների գլխավոր գաղափարախոս Մովլադի Ուդուգովը 1999 թ. հուլիսին «Մեդիամաքս» լրատվական ընկերությանը տրված հարցազրույցում՝ «Դադստանի ազատագրումից հետո շատ չեչենական ռազմական խմբերի թիվ 2 հարցը Ղարաբաղն է... »⁴¹:

Summary

THE ISLAMIC MERCENARIES IN NAGORNO-KARABAKH WAR

Gayane Kh. Chobanyan

Soon after its independence Azerbaijan changed its foreign policy course towards the Islamic world. Making religious accents in Nagorno-Karabakh war Azerbaijani government was trying to get military aid from Muslim countries and Islamic terrorist organizations. In 1991-1994 mercenaries who were enlisted in different countries especially from Afganistan, Pakistan, Chechnya, Turkey and Iran, fought on the side of Azerbaijanis in the war in Nagorno-Karabakh. The Azerbaijani authorities still deny the involvement of mojahideen in the military actions, but it is a proved fact, which is based on the bodies of killed people during the war, the religious literature, documents in their traditional languages, and other proves found by the defense forces of Nagorno-Karabakh. After the war the majority of the mojahideen left Karabakh front and were involved in other regional conflicts where they used the experience from Nagorno-Karabakh war. The territory of Azerbaijan had been often used to supply weapons, financial, material and other means and fighters to Chechnya and Dagestan. The other part of mojahideen that stayed in Azerbaijan influenced on establishment of radical Islam structures and branches of international Islamic terrorist organizations, which used the territory of Azerbaijan as a strong hold of terrorist network.

40 Տե՛ս **И. Порар**, Чеченский плацдарм в Грузии, «Независимая газета», 21 апреля, 2000, http://www.ng.ru/cis/2000-04-21/1_platsdarm.html

41 «Չեչեն մոջահեդները կուտակում են հայկական քաղաքականության հետևանքով առաջացած շարունակը», 9/2011, <http://www.mediamax.am/printpage.php?lang=am&nid=2349>

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ

Ե (ՃԵ) քաղթ, թիվ 3 (43) հուլիս-սեպտեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես